ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2016թ. հունվարի 12 **N 1-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. 2016 թվականի ապրիլի 17-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վերին Սասնաշեն գյուղական համայնքում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի հերթական ընտրություն:

2. 2016 թվականի ապրիլի 17-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքային համայնքում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հերթական ընտրություններ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ